## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **11 օգոստոսի 2025թ.**

2025թ. հուլիսի 31-ից օգոստոսի 11-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ էլեկտրական սարքավորումների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/118 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Սարգսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության պետ, |
| Ա. Խաչատրյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ.գնացքների շահագործման և նորոգման» ծառայության շահագործման գծով պետի տեղակալ, գլխավոր մեքենավար-հրահանգիչ, |
| Ք. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության պետի վերանորոգման գծով տեղակալ, |
| Հ. Նիկողոսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ՏԳԱ (տնտեսական գնացքների արտադրամաս) պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Սարգսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Լ. Հայրապետյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության ԱՊ և ԱՏ ինժեներ՝ Հ. Մովսիսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. հուլիսի 31-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 12:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Ձևափոխիչի սալիկ | 1,600,000.00 |
| 2-րդ | Դրայվերի սալիկ | 3,120,000.00 |
| 3-րդ | Դրայվերի սալիկ | 1,920,000.00 |
| 4-րդ | Սնուցման սալիկ | 1,600,000.00 |
| 5-րդ | Ղեկավարման սալիկ | 2,800,000.00 |
| 6-րդ | Ուժեղարար-ձևափոխիչի սալիկ | 2,160,000.00 |
| 7-րդ | Կոնդենսատոր | 96,000.00 |
| 8-րդ | Անջատասարք | 32,000.00 |
| 9-րդ | Անջատասարք | 32,000.00 |
| 10-րդ | Կոմպլեկտավորող | 480,000.00 |
| 11-րդ | Ռելե РЭС10 | 16,000.00 |
| 12-րդ | Ռելե РЭС22 | 32,000.00 |
| 13-րդ | Ռելե РЭС32 | 48,000.00 |
| 14-րդ | Ռելե РЭП-26-220П-У2.1 | 160,000.00 |
| 15-րդ | Ռելե РЭП-26-400П-У2.1 | 480,000.00 |
| 16-րդ | Հոսանք տվիչ | 800,000.00 |
| 17-րդ | Զոդիչ 40 Վտ | 24,000.00 |
| 18-րդ | Զոդիչ 100Վտ | 24,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Նեքստ» ՍՊԸ | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 33շենք, 40բն. | +37455999229 | armnextllc@gmail.com | 04451646 |
| 2 | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | ք. Երևան, Արտաշիսյան 44/4 բն. 12 | +37444989899 | yeghiazaryanshin@gmail.com | 00515231 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

**«ՆԵՔՍԹ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ժամկետանց է,

**«Եղիազարյան Շին» ՍՊԸ-ի**, ում կողմից Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ժամկետանց է:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Ձնափո խիչի | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 1,600,000.00 | 1,287,500.00 | 257,500.00 | 1,545,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սալիկ | «Նեքսթ» ՍՊԸ | | 2,585,000.00 | 517,000.00 | 3,102,000.00 |
| 2-րդ | Դրայվեր ի սալիկ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 3,120,000.00 | 2,300,000.00 | 460,000.00 | 2,760,000.00 |
| | | «Նեքսթ» ՍՊԸ | | 3,750,000.00 | 750,000.00 | 4,500,000.00 |
| 3-րդ | Դրայվեր ի սալիկ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 1,920,000.00 | 1,500,000.00 | 300,000.00 | 1,800,000.00 |
| | | «Նեքսթ» ՍՊԸ | | 2,600,000.00 | 520,000.00 | 3,120,000.00 |
| 4-րդ | Սնուցմա ն սալիկ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 1,600,000.00 | 1,250,000.00 | 250,000.00 | 1,500,000.00 |
| | | «Նեքսթ» ՍՊԸ | | 2,100,000.00 | 420,000.00 | 2,520,000.00 |
| 5-րդ | Ղեկավա րման սալիկ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 2,800,000.00 | 2,250,000.00 | 450,000.00 | 2,700,000.00 |
| | | «Նեքսթ» ՍՊԸ | | 4,130,000.00 | 826,000.00 | 4,956,000.00 |
| 6-րդ | Ուժեղար ար-ձևափոխ իչի սալիկ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | 2,160,000.00 | 1,660,000.00 | 332,000.00 | 1,992,000.00 |
| | | «Նեքսթ» ՍՊԸ | | 3,250,000.00 | 650,000.00 | 3,900,000.00 |
| 7-րդ | Կոնդենս ատոր | «Նեքսթ» ՍՊԸ | 96,000.00 | 370,000.00 | 74,000.00 | 444,000.00 |
| 8-րդ | Անջատ սարք | - | 32,000.00 | - | - | - |
| 9-րդ | Անջատ սարք | - | 32,000.00 | - | - | - |
| 10-րդ | Կոմպլեկ տավորո ղ | «Նեքսթ» ՍՊԸ | 480,000.00 | 3,540,000.00 | 708,000.00 | 4,248,000.00 |
| 11-րդ | Ռելե РЭС10 | - | 16,000.00 | - | - | - |
| 12-րդ | Ռելե РЭС22 | - | 32,000.00 | - | - | - |
| 13-րդ | Ռելե РЭС32 | - | 48,000.00 | - | - | - |
| 14-րդ | Ռելե РЭП-26-220П-У2.1 | - | 160,000.00 | - | - | - |
| 15-րդ | Ռելե РЭП-26-400П-У2.1 | - | 480,000.00 | - | - | - |
| 16-րդ | Հոսանք ավիչ | - | 800,000.00 | - | - | - |
| 17-րդ | Զոդիչ 40 Վտ | - | 24,000.00 | - | - | - |
| 18-րդ | Զոդիչ 100Վտ | - | 24,000.00 | - | - | - |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. օգոստոսի 06-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Ընթացակարգի 7-րդ, 10-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները,

3. Ընթացակարգի 8-9-րդ, 11-18-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները,

4. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. օգոստոսի 08-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2025թ. օգոստոսի 11-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-7-րդ, 10-րդ | «Ներքսթ» ՍՊԸ | բավարար |
| 1-6-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2025թ. օգոստոսի 11-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 1,287,500.00 |
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 2,585,000.00 |
| 2-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 2,300,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 3,750,000.00 |
| 3-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 1,500,000.00 |
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 2,600,000.00 |
| 4-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 1,250,000.00 |
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 2,100,000.00 |
| 5-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 2,250,000.00 |
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 4,130,000.00 |
| 6-րդ | «Եղիազարյան Շին» ՍՊԸ | X | 1,660,000.00 |
| | «Ներքսթ» ՍՊԸ | | 3,250,000.00 |
| 7-րդ | «Ներքսթ» ՍՊԸ | | 370,000.00 |
| 10-րդ | «Ներքսթ» ՍՊԸ | | 3,540,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. օգոստոսի 11-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Սարգսյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Խաչատրյան

Ք. Մնացականյան

Հ. Նիկողոսյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան